



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :  
7, Rue Papère — MARSEILLE

Ժե. Տարի - ՓԵՏՐՈՒՄ 1939 15<sup>me</sup> Année - Février 1939

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                                                                                                                         |                       |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Աստուծոյ Մշակութիւնը (Յ. Ն. Ղ.)                                                                                            | 17                    |
| ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Հոգին Դարձանը (Թրգմ. Ն. Մ.)                                                                                                | 19                    |
| » » Տաւ, Ներեւ, Զիջանիւ (Թրգմ. Ի. Յ. Արքայապետն)                                                                                        | 20                    |
| Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Խորհուրդները (Scofieldէն)                                                                                      | 21                    |
| ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Նա գե'ւ կ'սպասէ — Երկու Ծնունդներ — Խաւարէ Ի Լոյս — Ո՛վ Հոգւոյս սիրող Քրիստոս (Հաւաքեց' վեր. Ժ. Կ. Պ.) | 23                    |
| ՃԷՅՄՍ ՀԸՏՍԸԸ ԹԷՅԼԸ — Դպրոցական կեանքը եւ դարձը — Ճամբուն փոխուիւ (Թրգմ. Ն. Մ.)                                                          | 24                    |
| ԱՐՁԱԳԱՆԳ ՅԵՏ ՄԱՀՈՒ — Երկու Ագաթներ (Գ. Զաքարեան)                                                                                        | 26                    |
| Երկնից մէջ զբաղուած պիտի ունենանք                                                                                                       | 28                    |
| ՊԱՏԱՆԵԱՅ — Նամակ առ Փ. (***)                                                                                                            | 29                    |
| ՄԱՆԿԱՆՑ — Մասնիշը (Գոհարներ Մանուկներու Համար գիրքէն)                                                                                   | 30                    |
| ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ                                                                                                                          | 31                    |
| ԵՐԳ — Դառնուկիւններգը (Թրգմ. Յ. Ն. Ղ.)                                                                                                  | կող քին Յրդ ելին վրայ |

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամառները թէեւ ֆրանսահայ Աւետարանա-  
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,  
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը  
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ  
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը  
անհատներու համար, այլ ամենուն, բնորոշ Յշմարտութիւն  
ներկայացուցիչն ալ չհանդիսար ու եւ յարանուանութիւն մը,  
հասլա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը  
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

**«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամառները կը հրատարակուի Մարտի 16 էջերով (կողքէն զատ  
անոր խմբագրական ժամէնին անդասներն են**  
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, վեր. Ա. Թ. ՓԱՓԱԶԵԱՆ, վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ  
բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք  
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ  
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:  
Յօդուածաւարքեր միւսքեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան  
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին ջափ ընթեռնելի եւ մեղանով գրուած  
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-  
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար  
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք  
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք  
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են  
առաջուրէն հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց  
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապու համար:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ  
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին  
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱՃՆԵՔԻՆ Է —  
Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք  
Արտասահման Տոլար 1.25

**Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր**  
**ՀԵՏՏԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ**  
Ամերիկայէն travelers check, թղթադրամ  
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:  
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:  
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ  
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ  
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆԻ անունով, երկուքն ալ  
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN  
7, Rue Papère  
MARSEILLE (France)

# ԲԱՆԲԵՐ

Արժնցի՛ր գուն  
որ կը քնանաս, ես  
կանգնեմ մեռելուն  
բէն, ու Քրիստոս  
քեզի լոյս պիտի  
տայ:  
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս  
կէ քիչ մի ատենէն  
Ան որ գալու է՝  
պիտի գայ ու պի-  
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ մէ  
Անոր ցանգիստը մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,  
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ԺԵ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1959

ԹԻԻ 2

## ԻՆՉ ԵՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԸ



Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ

Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



Դուք Աստուծոյ մշակութիւնն էք: Ա. Կոր. Գ. 9:

Իմ տնկած տունկա, Իմ ձեռքիս գործը: Ես. Կ. 21:



Պիտի անուանեն զանոնք Արդարութեան բեւեկները, զորոնք  
Տէրը տնկեր է Իր փառքին համար: Ես. ԿԱ. 3:

ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻ Բանքերի քանի մը թիւերուն մէջ նկատի առինք այն յորջորջումները որոնք կ'ըլլան հաւատացեալներուն, բուն իսկ մեր Տէրոջը բերնով:

Այս տարի եթէ Տէրը կամի և որքան որ ինք հաճի, պիտի ջանանք Աստուծոյ խօսքին մէջ հաւատացեալներու համար: Ընդհանրապէս զործածուած մակդիրներն վեր առնել և զանոնք մեր օգտին համար վերլուծել:

Մշակութիւն ըսելով կը հասկնանք պատրաստուած և ցանուած դաշտ մը, որուն համար խիստ շատ ժամանակ և ոյժ թափուած է, զայն մինչեւ այդ վիճակին բերելու: Մտքիս մէջ դեռ թարմ է Vosgesի լեռները ծածկող անտառներուն մէջ գտնուած այն մշակոյթները, իմա տնկատանները, բուծարանները, որոնց առջեւ ես բաւական ժամանակ կանգ առած դիտած եմ և սոյն օրինակով աւելի լաւ հասկցած եմ յօդուածիս վերնագիրը:

Անտառներու տնօրէնութիւնը նախ կը փնտռէ և կը գտնէ յարմար տեղը, ուր ծառերուն սերմերը ցանուելու են: Այդ տեղն ըլլալու է նախ հանդարտ տեղ մը, որ հովէն պաշտպանուած է, շրջապատուած ըլլալով բարձրաբերձ և խիտ, հաստ ծառերէ, որոնք կրնան դիմանալ փոթորի-

կին ու բուքին և քամիին զօրութեան և զայն կտրել, մանր տունկերուն հասնելէ առաջ: Տեղը ցանկով մըն ալ շրջապատուած է, արպէս զի չար տղաք կամ մարդիկ չփորձուին ներս մտնել, մատաղ տունկերէն մէկուն միայն փսաս մը տալու: Աւելի եւս, որպէսզի կենդանիներ ներս չմտնեն զանոնք փրցնելու համար: Այսպիսի մշակոյթ մը ընտրելու ատեն երկրորդ նկատի առնելիք կէտը արեւի ճառագայթներուն հանդէպ յարմար դիրքն է: Մատաղ տունկերը անարգել արեւին ճառագայթներուն մէջ լոգնալու են առաւօտէն մինչեւ երեկոյ, ամառ և ձմեռ:

Այսպէս ամեն կերպով յարմարցուած և լաւ մը արօրուած, մշակուած տեղի մը մէջ կը սերմանուին ուզուած ծառերուն սերմերը: Անոնք ժամանակի ընթացքին տարուան մը կամ երկու տարուան մէջ կը ծլին, արմատ կ'արձակեն, կը բարձրանան թիզ մը, երկու թիզ, տարիներու ընթացքին հասակ մը, երկու հասակ ըլլալու, որմէ յետոյ անտառապահը կուգայ յարմար ժամանակին զանոնք վերցնելու իրենց տեղերէն և տնկելու հոն, ուր տնօրէնութիւնը կ'որոշէ: Մայրին կամ եղեինը, այլեւս գտած է իր տարիքը, տոկունութիւնը, դիմադրաւելու բնութեան բոլոր յարձակող ոյժերուն, միեւնոյն ատեն մեծնալու,

ուռճանալու, մեծ ծառ մը ըլլալու միւսներուն նման: Օրին մէկը անտառապահին հետ ճամբորդութիւն մըն ալ ընելու պատահութիւն ունենալով աւելի շատ տեղեկութիւն հաւաքեցի, և տեսայ թէ անիկա նոյնիսկ գիտէր անտառին անհամար ծառերուն իւրաքանչիւրին տարիքը: Անոնք ամենն ալ արձանագրուած են անտառի տոմարներուն մէջ:

Ի՞նչ որ գրեցինք գեղեցիկ լուսաբանական պատկեր մը չէ՞ Քրիստոսի եկեղեցիին: Ու իւրաքանչիւր ծառը հաւատացեալին մէկ օրինակը չէ՞: Ասոր համար է որ Աստուծոյ խօսքը հաւատացեալը կը նմանցնէ կաղնիին, արմաւենիին, պլտղատու ծառին, եղեւինին: Նոյնիսկ Նսայի կը նկարագրէ զայն Աստուծոյ խօսքով «Իմ տնկած տունկս, իմ ձեռքիս զործը... զորոնք պիտի անուանեն արդարութեան բեւեկները...»:

Թոյլ տուէք ինձ Աստուծոյ այս հրաշալի մշակութեան մէջէն առնել մէկ բեւեկներն ու զայն ուսումնասիրել: Միջակ տունկ մըն է այն հերձին և պիտտակին ընտանիքէն: Գարունը ողկուզաւոր կարմիր ծաղիկներով կը զարդարէ ինքզինքը և քիչ վերջը արմաւի ողկոյցներու նման կը կախէ իր պտուղները պիտտակէն պզտիկ, կլոր և սեւ ուլունքներով՝ իրեն հրաւիրելով զինքը ճաշակելու վարժուողները և իր թթուաշ անուշահոտութեամբը ուրախացնելով զանոնք: Իր նուէն կը հանուի ձէթ և երկուքին ծեծուելոյն ու եփուելովը կը հանուի իր անունովը ծանօթ իւղը բեւեկն (tèrebenthine) որ բժշկական աշխարհի մէջ ծանօթ է դարերէ ի վեր մանաւանդ Հայաստանի ու Պարսկաստանի մէջ, ուր բժշկութիւնը բնական միջոցներով՝ այնքան յառաջացած էր: Հայաստանի Մոկաց գաւառին մէջ կ'ըսուի թէ այդ իւղով նոյնիսկ տեսակ մը օճառ կը շինէին, անով ցուրտէն պատռուած ձեռքերը լուանալու և զանոնք բժշկելու համար: Նոյնիսկ իր պինդ կեղեւը անպէտ չնկատուիր, անոր մէջէն բեւեկն Քիոս (Tèrebenthine de Chio) ուտինը կը հանեն:

Իր փայտը պատուական է, կարմրորակ և կարծր, զոր միայն հազուադէպօրէն տան մը շէմքին համար կը գործածէին, քանզի սուղ է, աւելի կը գործածուին արօրներ, լուծեր և գործիքներու կոթեր շինելու, որոնք տարիներով կը դիմանան առանց կոտրելու: Ահա բեւեկներն: Նա օգտակար է, իր հունտէն, պտուղէն կեղեւէն սկսեալ մինչեւ փայտն ու բունը: Իր օգտակարութիւնը պէսպիսի է, տեսանք: Անոր ձէթը քաղաքի ամենայնտիւն տունն ու թագաւորական

պալատները կը լուսաւորէր: Անոր անուշահոտութիւնը ո՛չ միայն անտառը կը լեցնէր, հապաներս կը սողոսկէր իշխանազուներու բնակարանները և հաճոյք կը պատճառէր ամենուն, վանելով տեղւոյն վատաոողջ և անհաճոյ հոտերն ու կոտրելով փասսակար միքրոպները:

Ու հաւատացեալը կը յորջորջուի այս տունկին մակդիրովը, բնականաբար անոր յատկութիւններու նմանութեանց պատճառաւ:

Մեր վերնագրին մէջ սակայն տեսանք թէ մարգարէն հաւատացեալը արդարութեան բեւեկին կը կոչէ: Մարդ ուրեմն արդարութեան բեւեկներին մը յատկութիւնները հազնելու համար, նախ պէտք է իր անցեալ դատապարտեալ վիճակէն ազատագրուի Քրիստոսի արիւնով և Անոր արդարութիւնը հագուի: Առանց Քրիստոսի արդարութեան ու եւէ մարդ, ի՞նչ ալ կոչուի այն, հաւատացեալ կամ սարկաւազ, եպիսկոպոս կամ աւետարանիչ և միսիոնար, իր անձնական արդարութեամբը զարշահու է: Քրիստոս է զայն բեւեկներին բոլոր յատկութիւններովը հագցնողը, որով նա կը կոչուի արդարութեան բեւեկին:

Երեւակայեցէք բեւեկին մը առանձին կամ բեւեկներներու անտառ մը իր շուրջը սփռող անուշահոտութեամբ և օգտակարութեան ամբողջական արժէքովը:

Անկէ աւելի գեղեցիկ է տեսնել կենդանի արդարութեան բեւեկներն, կամ անտառը, այսինքն հաւատացեալն ու եկեղեցին Քրիստոսի արդարութեան անուշահոտութիւնն ու Անոր արժէքները հագած:

Ուրիշ անգամներ Բանբերի էջերուն մէջ զրած ենք թէ աշխարհ բաւականաչափ չտեսներ եկեղեցիին արժէքը իր ծոցին մէջ: Ընդհակառակն իրեն թշնամի տեսնելով, խորթ աչքով կը նայի անոր, կը հալածէ զայն. բայց պիտի տեսնէ իր մեծ կորուստը, երբ օր մը Ս. Հոգին եկեղեցին առած աշխարհէ բարձրանայ:

Սակայն եթէ աշխարհ չճանչնար և չուզեր ճանչնալ եկեղեցիին արժէքը և չուզեր գնահատել զայն, այս ըսել չէ թէ եկեղեցին ու հաւատացեալը իրենց կոչումէն հրաժարելու են: Հաւատացեալին գործն է Քրիստոսի անուշ հոտն ըլլալ. եթէ ոմանք անկէ զայն թակղելով մեռնին, յանցաւորը իրենք են, քանզի ուրիշներ այդ նոյն անուշահոտութեան կեանք կ'ընդունին: Եթէ ոմանք լոյսէն կը խորշին իրենց գործերու հարութիւնը երեւան չելլելու համար, հաւատացեալը լոյս պիտի տայ, քանզի մոլորեալներ

կան, որոնք լոյսի ճառագայթի մը կ'սպասեն, իրենց ճամբան շտկելու:

Եթէ մարդիկ կան որոնք սառնամանիքը ընտրելով կ'ուզեն սառիլ, այսու ամենայնիւ հաւատացեալները այրելու են, ցուրտէն սար-  
"ըռացող ուրիշ հոգիներուն տաքութիւն տալու:

Հաւատացեալը բեւեկներին նման ընտանեկան, երկրագործական, արհեստական և ամեն գործե-  
րու մէջ պէտքեր լեցնելու և կեանքը տանելի ընելու համար կանչուած է: Անոր գործը բազ-  
մապիսի է, օգտակարութիւնը բազմապիսի և անսահման: Անիկա ամեն տեղ նոյնն է, ընտա-  
նիքին մէջ, եկեղեցւոյ մէջ, ժողովուրդին մէջ, նաեւ առանձնութեան մէջ: Նա ժամանակի և միջավայրի համաձայն գոյն ու հոտ չփոխեր, հապա Բրիտոսի արդարութեան բեւեկներն է ամեն տեղ:

Սիրելի Բանբերի ընտանիք, Աստուծոյ մշա-  
կութիւնն ենք: Մեր մէջ եթէ կան անապաշ-  
խարներ, Բրիտոսի արդարութեան դիմեն: Եթէ կան նորահասներ, միտքերնին բերեն որ անտա-  
ռապահ մշակը (Հայրը) իրենց պաշտպանութեան և աճեցման ու մեծ բեւեկի մը ըլլալու համար ամեն պէտքերը արդէն նախատեսած է: Եթէ կան երիտասարդ տունկեր, գիտնան թէ Տէրը օրին մէկը իր ուզած տեղին մէջ պիտի տնկէ զիրենք հոն իր նպատակին ծառայեցնելու: Եթէ հաստաբուն բեւեկներ են, պիտնալու են թէ Աստուծոյ տրամադրութեան տակ կը գտնուին պտուղ տալու, պտուղները գործածելի ընելու, ճիւղերէն՝ նոյնիսկ բունէն կ'ոտրուելու այլոց օգտակարութեան համար:

Կ'ուզե՞նք արդարութեան բեւեկներն Անոր նոյնքան տրամադրուիլ, որքան բեւեկներն ան-  
տառապահին: Այն ատեն մեր ծառայութիւնը բազմապիսի և կատարեալ պիտի ըլլայ: «Ես ձեզ ընտրեցի ու զքի որ երթաք և պտուղ բերէք»:

«Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի, Լիբանանի եղեւինի պէս պիտի մեծնայ: Տէրոջը տանը մէջ տնկուածները մեր Աստուծոյն սրահ-  
ներուն մէջ պիտի ծաղկին: Ծերութեան ատեն ալ պտուղ պիտի տան, պարարտ ու կանաչ պիտի մնան»: Սաղմ. ԴԲ, 12—14

Յ. Ն. Ղ.



## ՀՈԳԻՆ ԴԱՐՄԱՆԸ

Բանի մը համար հոգ մի ընէք.

ՓԻԼ. Դ. 6

Ի՞նչ վեհ գաղափարական: Նեղիչ հոգեր որեւէ դեր խաղալու չեն հաւատացեալին կեանքին մէջ: Հոգը քրիստոնէական նկարագրին ազնիւ մետաղը ստորնացնող խառնուրդ մըն է: Հոգը, աւերներ կը գործէ, ուստի Առաքեալը խրատ կուտայ որ հաւատացեալներ կեանքի ամէն պարագայի տակ անպայման մէկդի դնեն հոգը: Տէրոջը թագաւորութեան մէջ տապնապի տեղ տալու չէ երբէք: Ոչ դրամի և ոչ ալ հանգիստի համար տապնապելու ենք: Տապնապելու չենք նոյն իսկ սրբութեան կամ հոգիներու փրկութեան համար: Շատերու ձախորդութեան գաղտնիքը ճիշդ այս կէտին մէջ կը կայանայ: Թէպէտեւ մեր տուններէն կը հեռացնենք տապնապը, սա-  
կայն զայն մեր եկեղեցիներուն մէջ կը պահենք: Մեր առօրեայ հացին համար հոգ չենք ըներ, սակայն հոգ կ'ընենք կենաց հացին համար: Չենք տապնապիր մեր գործին համար, բայց կը տապնապինք մեր քրիստոնէական ծառայութեան համար: Այսպէս հոգի աւերիչ հոգին բոլորովին չենք վտարեր: Գէթ սենեակ մը կը յատկացնենք անոր մեր տան մէջ:

Արդ Աստուծոյ խօսքը մեզի յստակօրէն կը սորվեցնէ թէ հոգը միշտ աւերիչ դեր կը խաղայ նոյն իսկ ամենէն բարձր ծառայութեանց մէջ: Երբ հոգիներ շահելու ջանքերուս մէջ տապնա-  
պիմ, զօրութիւնս կը տկարանայ: Այս վեհ գոր-  
ծին մէջ յաջողելու համար Բարձրեալին հետ հաղորդակցելու ջրանցքներ բացուած են ինծի հաւատքի միջոցով: Թերեւս աւելի շիտակ է ըսել թէ իմ հաւատքս է այն ջրանցքը, որուն միջոցով Բարձրեալին զօրութիւնը կեանքիս մէջ կը թափուի: Որչափ մեծ ըլլայ հաւատքս, այն-  
չափ աւելի խորունկ կ'ըլլայ ջրանցքը: Որչափ խորունկ ըլլայ ջրանցքը՝ այնքան աւելի յոր-  
դառատ կ'ըլլայ հոսանքը: Քու հաւատքիդ պէս պիտի ըլլայ քեզի: Տապնապը հաւատքը կը կծկեցնէ, որով երկնային ջրանցքը կը նեղնայ: Հետեւաբար հեղեղը չի կրնար ազատօրէն յոր-  
դիլ: Տապնապը երկնային հոսանքին արգելք կ'ըլլայ, ուստի փնասակար է ամենէն բարձր ծա-

ռայութեանց: Այն երէցը որ իր պաշտօնէութեան նկատմամբ հոգի ու տաղնապի մէջ է, իր զօրութեան ջրանցքները նեղցնելով իր պարտութեան միջոցները կ'աւելցնէ: Վստահ եմ թէ այս մեծ օրէնքը յաճախ և ընդհանրապէս կը մոռցուի, ուրեմն երկնից թագաւորութեան ոյժերը ողորմելիօրէն կը պակսին: Համոզուած եմ թէ երբ կարելի ըլլայ նեղիչ տաղնապի հոգին քրիստոնէական եկեղեցիէն վտարել, զօրութեան առատ ու զարմանալի հոսանքներ պիտի վազեն անոր ջանքերուն վրայ: Աստուծոյ զեար ջուրով լիցուն է: Ուրեմն ինչո՞ւ միայն կաթիլներ կ'ընդունինք անկէ: Որովհետեւ մեր ջրանցքները տաղնապի ու հազարաւոր ոչինչ հոգերու քարերով զոցուած են: Վերցնենք արգելքները ու երկնային կենդանարար ջուրերը պիտի ողողեն մեր ամբողջ աշխատութիւնը:

Սակայն ի՞նչպէս կրնանք ընել այս: Առաքեալը մեզի կը պատասխանէ ու իր պատասխանին մէջ կը գտնենք հոգին դեղթափը: Ահա առաջին զաղտնիքը՝ «Աղօթքով»: Հոս աղօթք թարգմանուած բառը խնդրանք չի նշանակեր, այլ խնդրողին տրամադրութիւնը, անոր միտքին փիճակը կը նկարագրէ: Հոգին կրնայ աղօթքի դիրքի մէջ գտնուիլ նոյն իսկ առանց բան մը խնդրելու: Ճշմարիտ աղօթքը խօսքով չսկսիր, այլ տրամադրութեամբ: Հոգեւոր ճշմարտութեանց մէջ խորասուզուող անհատներ միշտ լաւ հասկցած են այս զաղտնիքը: Իրենց հոգիները վարժեցուցած են պատկառելի դիրքով ու սպասման փիճակի մէջ Աստուծոյ հետ յարաբերելու: Լոռութեամբ ու երկիւղածութեամբ Տէրոջը առջեւ ծնրադրած՝ շունչերնին բռնած, սպասած են: Այսպէս Պօղոսի յորդորին համեմատ անդադար աղօթած են: Եթէ էական աղօթքը խօսքերու արտասանութիւն մըն է, անդադար աղօթելը կարելի չէ, սակայն եթէ էական աղօթքը հոգեւոր դիրք մըն է, կարելի է Պօղոսի այս խրատին հնազանդիլ վայրկեանէ վայրկեան, օրէ օր ու տարուէ տարի: Բարեբաղդաբար կարելի է ինքզինքնին՝ այս դիրքին վարժեցնել: Տէրը իր շնորհքով կարելի ըրած է որ մենք աղօթքի այս հոգին ընդունինք ու այս հիմնական, անբարբառ աղօթքի հոգին է զոր Առաքեալը իբրեւ առաջին պաշտպանողական ուժը կը նկատէ տաղնապեցուցիչ հոգերու ընդդէմ:

Սակայն աղօթքի հոգին որոշ խնդրուածքներու արտասանութիւնը զանց պիտի չընէ: Աղօթքի տրամադրութիւնը խոնարհ աղաչանքներու տեղի պիտի տայ: «Ու աղաչանքով»: Լոռիկ

մտերմութիւնը արտայայտուելու մտերմութեան կ'առաջնորդէ: Հոգ ընելու տեղ՝ քեզ նեղող խնդիրները ներքին սենեակիդ մէջ Տէրոջ ներկայացուր և Անոր հետ խօսակցէ: «Աղօթքով Տէրոջը տար»: Զանք ընենք որ ամենէն զեղեցիկ կերպարանքը կրող անհատութիւնն իսկ մեր սրբազան հաղորդակցութեան շրջանակը չի սահմանափակէ: «Ամէն բանի մէջ... աղաչանքով»: Ահա մեր արտօնութեան զարմանալի տարածութիւնը: Մեզի հոգ պատճառող խնդիրը կեանքի ինչ երեւոյթի ու պարագայի տակ ալ որ ներկայանալու ըլլայ, չի ջանանք զայն անձամբ լուծել առանձին տաղնապելով: Լոռութեամբ սրբաբանը տանինք զայն ու Աստուծոյ զէմքին լոյսին առջեւ տարածենք: Այո, թող այն սուրբ լոյսը ինչայ անոր վրայ: Համբերութեամբ սպասենք Տէրոջը յայտնութեան:

«Գոհութիւնով մէկ տեղ», Պօղոս երբէք չի մոռնար իր ստացածին համար գոհութիւն տալ: Մեր հոգերուն կէսը անմիջապէս պիտի փարատէր, եթէ փառաբանութեան Սաղմոս մը երգելու սկսէինք: Կարգ մը տաղնապներ, որ ուրիշ ամէն միջոցներու կրնան դիմադրել, գոհութեան առջեւ կը փարատին: Ինչպէս որ սառնալեռներ կը հալին տաք հոսանքներու ազդեցութեան տակ, նոյնպէս ալ գովաբանութեան առջեւ հոգերու կոյտեր յօգս կը ցնդին: Ապերախտ կեանք մը շատ պաղ է ու սառնալեռներով շրջապատուած: Տաքութեան աստիճանը բարձրացնենք, որպէսզի անոր զարմանալի արդիւնքը տեսնենք: Ճշմարտապէս երախտազէտ սիրտ մը այնքան լիցուն է Աստուծոյ ողորմութեանց զգացումով, որ չի կրնար հոգերու և տաղնապներու տեղ տալ:

Թարգմ. Ն. Մ.

## ՏԱԼ, ՆԵՐԵԼ, ԶԻԶԱՆԻԼ

«Աւելի երանելի է տալը քան թէ առնելը» — Բայց միայն անոր համար, որ ընկերը սիրելու սքանչելի պատուէրը լրջօրէն կ'առնէ: Բնական սրտին համար առանց անձնասիրական և շահախնդրական խորհուրդի ընկերոջ բան մը տալը, յիմարաբար և անստույգութեամբ եղած բան մըն է: «Կուտամ որ դուն ալ փոխարէնը տաս»ը աւելի ընտանի եղող զգացում մըն է մարդկային սրտին:

Բարեբախտաբար և բոլոր փառքը Աստուծոյ է որ կը վերաբերի, ուրախ սրտով պարգեւատու-

ներ կը գտնուին, (գործնք Տէրը կրնայ սիրել), որ իրենց ընկերոջ պարգևի, դրամական գոհողութեան, ժամանակի կամ ուժի միջոցաւ ուրախութիւն և օգնութիւն կարենալ տալու առանձնաշնորհը կը նկատեն ոչ թէ որպէս խղճի պարտականութիւն մը, այլ որպէս սրտէն բղխող ուրախութիւն մը: Անոնք ուրիշ շնորհակալութիւն չեն փնտռեր, եթէ ոչ զայն, որ կը փայլի ընդունողին երանաւէտ նայուածքին մէջ, այն արտացոլումը, որ բուն իսկ իրենց սրտին խորը կը թափանցէ:

Եթէ «տալ»ը շատ դժուար բան մըն է մեր մարդկային սրտին համար, «ներել»ը շատ աւելի դժուար է: Որքան դիւրաւ կը խորհինք թէ մեր իրաւունքներուն կը փնտռենք բան մը ներելով: Թերեւս խիստ առատաձեռն ենք տալու մէջ, բայց մեր պատուոյն մասին կծծիութիւն կ'ընենք երբ խնդիրը ներելու կոչուայ: Եւ նոյն իսկ հոն, ուր ներելու որոշումը բոլորովին տրուած է և երբ լեզուն ալ ներողութեան խօսքերը արտասանած է անոր՝ որ մեզմէ ներում խնդրած էր: Որքան ժամանակ կ'անցնի տակաւին, մինչեւ այլեւս ուէ զրգոմտի զգացում չունենանք անոր հանդէպ:

Որքան անձեր, և յաճախ նոյն իսկ լաւագոյնները, երբեմն երկար տարիներ ահաւոր կոիւ ունեցած են մինչեւ որ սիրտը իրականապէս պատրաստ եղած է ներելու: Անոնք կռուած և կռուած են առանց կարենալ գտնելու հաշտարար և ազատարար խօսքը արտասանելու զօրութիւնը, որ իրենց անձնական կեանքին մէջ խաղաղութիւնը պիտի բերէր: Բայց երբ այդ խօսքը արտասանած են, իրենց համար այնպէս էր որպէս թէ արեւը բոլորովին նոր փառաւորութեամբ մը կը ծագէր:

Բայց «ներել»ը տակաւին ամենադժուար բանը չէ, վասն զի ան միշտ նկատի ունի ուրիշ մը գործուած սխալ մը, որ գործողը զայն ընդունած է, այսինքն յայտնի սխալ մը կամ մեղք մը: Բայց երբ հարցը «գիշում» ընելուն է որ կուզայ, այն ատեն տարբեր կ'ըլլայ: Երկու կողմն ալ կրնան իրաւունք ունեցած ըլլալ: Բայց խաղաղութեան սիրոյն երկուքն մէկը կը յօժարի աւելի փնտս քաշել քան թէ կոռելի իր իրաւունքը ստանալու համար: Եթէ «ներել»ը դիւրաւ կը նկատուի որպէս քաջութեան գործ մը, ես պիտի ըսէի զրեթէ հերոսական՝ «գիշանիլ»ը սակայն, կը նկատուի որպէս անճարակութիւն: Բայց ան որ կրնայ ասանկ խոնարհութեան մը յօժարիլ անիկա հոգեւոր զօրութեան

շատ աւելի մեծ ապացոյց մը կուտայ, քան թէ ան, որ կ'ուզէ անպայման միշտ իրաւունք ունեցող սեպտիլ:

«Տալ. ներել, զիջանիլ», յաջորդը միշտ աւելի դժուար է քան նախորդը, բայց այս գործերէն իւրաքանչիւրը «քանջելի է երբ Աստուծոյ սէրն է որ կը գործէ մարդու մը սրտին մէջ»:

Թարգմ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝  
SCOFFIELDԷՆ  
Վ. ՍՍԱԿԱՆ

### ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԸ

(Շարունակութիւն անցեալ թիւէն)

6. Քրիստոս մեր ներսիդին բնակելու խորհուրդը. Կող. Ա 26, 27, Գաղ. Բ 20: Այս խորհուրդն ալ ծածկուած էր առաջուան դարերէն ու ազգերէն հետէ ու հիմա իր սուրբերուն յայտնուեցաւ: Այս խորհուրդը ունի փառաւոր ճոխութիւն և փառաց յոյսն է: Գաղ. Բ 20ը կը պատկերացնէ ամենէն պարզ բայց հրաշալի գործնական օրինակով մը, «Քրիստոս կը բնակի իմ մէջ» ի խորհուրդը: Այս խորհուրդին պատասխան տուող արտայայտութիւն մըն է «Քրիստոսի մէջ», որ զանազան կերպերով թարգմանուած մօտ 200 անգամներ կը գտնուի Նոր Կտակարանին մէջ: Նախ «Քրիստոսի մէջ» Աստուածութեան յատկութեանց, իմաստութեան, մէկ խօսքով Աստուածութեան բոլոր լեցունութեան բնակիլը, և յետոյ մեր «Քրիստոսի մէջ» ունեցած ամէն հոգեւոր օրհնութիւնները խաղաղութիւն, ուրախութիւն, խոստմունքներ և այլն: Այս երկու տեսակէտները միասին յայտնուած են Յովհ. ԺԵ 4ի, «Դուք իմ մէջս ու ես ձեր մէջ» և աւելի փառաւոր կերպով Յովհ. ԺԷ 21ի մէջ, «Դուն ով Հայր, իմ մէջս, ու ես քու մէջդ... անոնք ալ մեր մէջ»:

7. Քրիստոսի խորհուրդը. Կող. Բ 2. Քրիստոսի Աստուածութեան խորհուրդը, Կող. Բ 9: Քրիստոս իբր մարմնացեալ լեցունութիւնը Աստուածութեան: Մարմնացեալ Քրիստոսի մէջ մարդուն

փոխանցուելու համար հարկ եղած Աստուածա-  
յին իմաստութիւնը կայ. Ա. Կոր. Բ 7, Կող. Բ  
2, 9:

8. Այն խորհուրդը, որուն գործադրութեան  
միջոցներովը Աստուծոյ նմանութիւնը վերստին  
ետ կը տրուի մարդուն. Ա. Տիմ. Գ 16. «և յայտ-  
նապէս մեծ է Աստուածաշնորհութեան խորհուրդը.

Աստուած մարմինով յայտնուեցաւ.

Հոգիով արդարացաւ.

Հրեշտակներուն երեւցաւ.

Հեթանոսներուն մէջ քարոզուեցաւ.

Աշխարհի մէջ հաւատացուեցաւ.

Ու փառքով համբարձաւ»:

9. Անորէնութեան խորհուրդը. Բ. Թեա. Բ 7  
Մատթ. ԺԳ 33: Առաքեալին «Անորէնութեան  
խորհուրդը հիմակուընէ կը զօրանայ» ըսածը  
Յիսուսի «Խմորի առակին» կը համապատասխանէ:  
Մատթ. ԺԳ 33: Իրաւցնէ սխալ է այս առակը  
մեկնել, իբր թէ ան ներկայացնէր Աւետարանը,  
որ եկեղեցիին ձեռքով աշխարհի մէջ (երեք գրիւ  
ալիւր) մտցո՞ւնեցաւ և կամացուկ մը, զաղտագողի  
կ'աշխատի, մինչեւ ամբողջ աշխարհ ապաշխա-  
րէ (մինչեւ ամէնն ալ խմորեցաւ): 1.— Խմորը  
Սբ. Գրքին մէջ ամէն տեղ մեղքի տեսակէտէ  
օրինակ է, չարութեան և անզգամութեան խմո-  
րը». Ա. Կոր. Ե 7: Մեր Տէրով կողմէ ալ այս  
իմաստով գործածուած է խմոր բառը. Մատթ.  
ԺԶ 6—12, Մարկ. Ը 13:

2.— Այս դարուն մէջ բովանդակ աշխարհի  
ապաշխարութիւնը (մինչեւ ամէնն ալ խմորե-  
ցաւ) կը հակասէ մեր Տէրով խօսած միւս առակ-  
ներէն ոմանց «Յորեն և որոմ» նաեւ «Ուռկան»ի  
առակը: Յիսուս կը ներկայացնէ անապաշխար  
աշխարհի մը մէջ մասամբ ապաշխարած թագա-  
ւորութեան մը պատկերը, աղէկ ձուկեր և գէշ  
ձուկեր նոյնինքն թագաւորութեան ուռկանին  
մէջ: 3.— Թագաւորութեան տարածման կերպը  
Մատթ. ԺԳ զլիւն առաջին, Սերմնացանի առա-  
կին մէջ յիշուած է: Այդ կերպը սերմը ցանելով  
է և ոչ թէ խմոր խառնելով: Ս. Գրոց մէջ օրի-  
նակները որոշ իմաստ մը կ'ստանան ներշնչեալ  
գործածութեամբ: Խմորը ապականացման օրի-  
նակն է, որ զաղտագողի կը գործէ և գործածուած  
է միշտ և միայն գէշ տեսակէտէ և Յիսուսի  
կողմէ ներկայացուած է իբր սխալ վարդապե-  
տութեան օրինակը: Ալիւրը, ընդհակառակը, կը  
գործածուէր անուշահոտ պատարագներէն մէկուն  
մէջ. Ղեւտ. Բ 1—3, և քահանաներուն կերակուրն

էր: Ղեւտ. Զ 13—17: Կին մը բարոյական գէշ  
իմաստով միշտ անբնականոն վիճակ մը կը ներ-  
կայացնէ կրօնապէս: Թիւատիրի եկեղեցիին  
մէջ սորվեցնողը կին մըն էր. Բաղդ. Յայտն. Բ  
20 և Ժէ 1—6: Արդ՝ խմորի առակը այս ծանօթ  
տեսակի օրինակներով մեկնելով կը դառնայ  
ազգարարութիւն մը թէ ճշմարիտ վարդապե-  
տութիւնը, որ թագաւորութեան որդիներուն  
կերակուելուն համար տրուեցաւ, Մատթ. Գ 4,  
Ա. Տիմ. Գ 6, Ա. Պետ. Բ 2, ի վերջոյ պիտի  
խառնուի ապականած և ապականող սուտ վար-  
դապետութեամբ, և այս պիտի ըլլայ պաշտօ-  
նապէս, բուն ինքն հաւատուրաց եկեղեցիին  
ձեռքով. Ա. Տիմ. Գ 1—3, Բ. Տիմ. Բ 17, 18, Գ 3, 4,  
Բ. Պետ. Բ 1—3:

10. Եօթը աստիւրուն խորհուրդը. Յայտն. Ա  
20: Եօթը եկեղեցիներուն հրեշտակներու բնա-  
կան բացատրութիւնը այն է թէ անոնք այդ  
յիշեալ եօթը եկեղեցիներուն կողմէ զրկուած  
պատգամաւորներ էին, աքսորեալ առաքեալին  
վիճակէն լուր առնելու: Բայց անոնք կը ներկա-  
յացնեն նաև որ և է մէկը, որ Աստուծոյ պատ-  
գամները կը տանի եկեղեցիի մը:


11. Բաբելոնի խորհուրդը. Յայտ. Ժէ 5, 7:  
Բաբելոն — խառնակութիւն, յաճախակիօրէն  
մարդարէններուն կողմէ գործածուած է օրինակա-  
ւոր իմաստով: Յայտնութեան գրքին մէջ երկու  
Բաբելոններ կան: ա. Եկեղեցական Բաբելոն, որ  
հաւատուրաց քրիստոնէութիւնն է իրեն զուխ  
ունենալով պապականութիւնը, և բ. քաղաքա-  
կան Բաբելոն, որ զաղտնին զաշնակիցներու  
տէրութիւնն է հեթանոսական աշխարհ կառա-  
վարելու վերջին վարչաձեւը: Եկեղեցական Բա-  
բելոնը «մեծ պոռնիկն» է, Յայտ. Ժէ 1, և կը  
քայքայուի քաղաքական Բաբելոնի ձեռքով,  
Յայտն. Ժէ 15—18, որպէսզի զազանը մնայ միակ  
պաշտամունքի առարկան: Բ. Թեա. Բ 3, 4,  
Յայտն. ԺԳ 15: Իսկ քաղաքական Բաբելոնի  
կործանումը պիտի ըլլայ Տէր Յիսուսի փառքով  
վերադարձով:

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Մատթ. ԺԸ. 15—17ի պատուէրին համաձայն  
միայն վարուէ եղբօրդ հանդէպ: ճշմարիտ  
միաբանութիւնը հաստատ պահելուն մէջ  
ատկէ աւելի լաւ միջոց մը չկայ:



## ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ



ԿԵՆԱՅ

ԱԾՈՒՆԵՐԷՆ

### ՆԱ ԴԵՌ ԿՍՊԱՍԷ

Քանի մը տարի առաջ Իտալիոյ մէջ արեւոտ կիզիչ օր մըն էր, այնպէս որ ամեն մարդ կը քնանար կէսօրին: Մինչեւ իսկ նշանաւոր հին եկեղեցիի մը մենակեաց դռնապանը որ պաշտօնի վրայ կը գտնուէր, այն ալ իր դիրքին մէջ կը մրափէր: Մէկէն ամուր գոցուած դուռը զարնուեցաւ: «Ճամբադ գնա» պոռաց քնոտ դռնապանը ներսէն, «Այցեկութեան ժամը չէ»: Մարդը սակայն տակաւին դուռը շարունակեց զարնել և միշտ ալ նոյն պատասխանը կ'ընդունէր, «Ճամբադ գնա, եթէ մուրացկան մ'ես, քեզի բան մը չկայ»: Այս խօսքը լսելով մարդը դուրսէն աւելի զօրաւոր զարնել սկսաւ և հեղինակաւոր ձայնով մարդուն բուն լեզուովը բարձրաձայն կանչեց. «Յանուն Իտալիոյ բաց դուռը, ան որ դուն կ'սպասցնես, Անգլիոյ թագաւորն է»: Քանզի դուրսը սպասողները եղուսդ թագաւորը և իր հետեւորդներն էին: Աւելորդ է ըսել թէ դռնապանը բացաւ դուռը և ընդունեց վեհափառ հիւրը թէև ժամանակէն առաջ էր: Ո եւ է երկրաւոր թագաւորէն աւելի մեծ մէկը, թագաւորներուն թագաւորը քու սրտիդ դուռը կը զարնէ: Արդեօք աշխարհի զուարճութիւնները զգացումներդ ա՞յնպէս բթացուցեր են որ Անոր սրտիդ դրան բաղխումները չես լսեր, հոգի»:

### ԵՐԿՈՒ ԾՆՈՒՆԴՆԵՐ

Պատ. Մօտէրզօն սապէս կը պատմէ: «Կեանքիս մէջ Ծնունդը առաջին անգամ էր որ միեակա անցուցի, երբ փոքր քաղաքի մը պատուելիին օգնականն էի և չէի կրնար իմ հայրենիքս երթալ: Սրճարանի մը վրայ վարձած սենեակիս մէջ առանձին կը նստէի և միայն թուղթ խաղողներուն աղմուկները կը լսէի: Ոչ Ծնունդի ծառ և ոչ ալ նուէրներ ունէի և Ծնունդը յիշեցնող ո եւ է բան ալ չկար, բայց և այնպէս տրտում չէի որովհետեւ այդ տարուայ ընթացքին Յիսուսի իմ Փրկիչս ըլլալուն ուրախութիւնը

սիրտս լեցուցած էր: Այս պատճառաւ փառք և զոհութիւն տալէն ի դատ բան մը չէի կրնար ընել:

Ասկէ քանի մը տարի ետքը Ծնունդը նորէն միեակա անցուցի, կինս քանի մը շաբաթ առաջ գերեզմանը դրած էինք: Այս պատճառաւ սիրտս վիշտով լեցուն էր: Այսու հանդերձ սիրտս լեցնող ուրախութիւնը այս կսկիծներէն մեծ էր, ուստի զոհութիւնով կրցայ ըսել: «Յիսուս իմս է: Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ, երկրի վրայ ալ Քեզմէ ուրիշը չեմ ուզեր»:

### ԽԱԽԱՐԷ Ի ԼՈՅՍ

Օգոստինոս իր մասին հետեւեալը կը պատմէ. Պատանեկութեանս ժամանակ չարութեամբ և հեզնանքով լի կեանք մը ունէի, սակայն Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոսը շատ կը սիրէի ու իր քարոզներն ալ ուրախութեամբ կը լսէի: Կը լսէի զինքը ո՛չ թէ իր բերած պատգամը ըմբռնելու, այլ իր պերճախօսութեամբը յագեցնալու: Սակայն Աստուած, որ բարի մօրս արտասուօք լի աղօթքները լսած էր, այնքան զօրաւոր կերպով ազդեց սրտիս վրայ, որ աստուածային ճշմարտութեան առջեւ պարտուած, որոշեցի ապաշխարել: Սակայն աշխարհի ցանցէն այնքան մը բռնուած էի, որ մեղքէն հրաժարիլը մէկ օրէն միւսին կը ձգէի: Օրին մէկը մեծ պայքարի մը մէջ ինկայ և խնդրեցի Աստուծմէ որ ինք ազատէ զիս, ու երբ արտասուածոր ինկած էի թզենիի մը ծառին տակ, մեղմ ձայն մը լսեցի որ կ'ըսէր. «Առ ու կարգա»: Այն ատեն Նոր Կտակարանս բացի ու կարդացի «Ո՛չ թէ անառակութիւններով ու գինովութիւններով, և ոչ թէ խառնակ անկողիներով ու պղծութիւնով... Հռ. ԺԳ. 13»: Այն ատեն երկնային լոյսը լեցուց իմ սիրտս, իմ Փրկիչս գտայ և սուրացի սիրելի մայրիկիս գիրկը նետուելու:

### Ո՞Վ ՀՈԳԻՈՅՍ ՍԻՐՈՂ ՔՐԻՍՏՈՍ

Այս երգին հեղինակը Չարլս Ուէսլի 22 Մարտ 1788ին իր աչքերը գոցեց: Այս երգին ի՞նչ պարագայի տակ գրուելու մասին տարբեր կարծիքներ կան: Տօքթ. Շուլձ իր «Թագաւորին երգերը» գրքին մէջ հետեւեալը կը պատմէ.

Չարլս Ուէսլի օր մը Իրլանտիոյ մէջ բացօթեայ ժողով մը կ'ընէր, անոր խիղճերուն

մխրճող վկայութիւնը գրգռեց ամբողջ ուր քիչ յետոյ անոր վրայ յարձակելու սկսաւ: Քարոզիչը ստիպուեցաւ մօտակայ ծանօթի մը տունը փախչիլ: Երբ խուժանը գինք հոն փնտռել սկսան, տանտիկինը զանոնք տնտնացուց և այդ պահուն Ուէսլիին նշան ըրաւ որ ետեւի պատուհանէն դուրս ցատկէ ու ետեւի առուակին եղերքը գտնուող մացառներուն տակ պահուրախ: Իր պահուրտած մացառին տակ անոր այս հաւատքի երգը տրուեցաւ,

«Ո՛վ հոգւոյս սիրող Քրիստոս,  
Թող թռչիմ ես Քոյդ ի ծոց,  
Երբ գոռան ջուրք յորդահոս  
Եւ ամպեր մութ հողմակոծ...»

«Ես չունիմ այլ ապաւէն,  
Ի՞նչ ես վէմքս ո՛հ, Տէր իմ,  
Կատաղի ալեաց մէջէն  
Դէպի վեր Քեզ կը նայիմ...»

Տէրը անոր աղօթքը լսեց ու գինք մինչեւ 82 տարիքը պահեց և զայն անհամար հոգիներու օրհնութեան պատճառ ըրաւ:

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

ՃԷՅՄՍ

ՀԸՏՍԸՆ  
ԹԷՅԼԸՐ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ  
ԵՒ ԴԱՐՁԸ

Հըտսըն 11 տարեկան էր երբ իր կարճատեղ դպրոցական շրջանին սկսաւ: Սակայն այս պարագային իսկ անկարող էր կանոնաւոր կերպով յաճախել, քանի որ փափուկ առողջութեան կ'ընկերանային նաեւ ուսանելու մեծ եռանդը ու չափազանց աշխատութիւն:

Պէտք ունէր ուրիշ տղոց հետ շփման դալու: Մանչերու զբօսանքները իրեն համար հրապույր չունէին ու անոնց մէջ առաջնակարգ գիրք մը չգրաւեց: Սակայն յաջողեցաւ մնայուն բարեկամութիւններ հաստատել դպրոցին մէջ ու խաղի միջոցները արժէքաւոր ազդեցութիւն կատարեցին իր նկարագրին վրայ: Այսուհանդերձ դպրոցի օրերը իրապէս երջանիկ օրեր չէին Հըտսընի համար, քանզի իր վարժուած հոգեւոր մթնոլորտին պակասը կ'զգար: Կորսըն-

ցուց իր մանկութեան երջանիկ հաւատքը ու 6 տարի վարանոտ քրիստոնէական կեանք մը ապրեցաւ, հակառակ անոր որ ընդհանուր առմամբ Հարաջար կ'աշխատէր ինքզինքը քրիստոնեայ ընելու:

Բայց և այնպէս իր դպրոցական կեանքին առաջին տարուան ընթացքին լսեց խօսք մը զոր երբեք չկրցաւ միտքէն հեռացնել: Թասմանիացի Մր. Հէնրի Րիտ բանախօսութեան մը միջոցին պատմեց մահուան դատապարտուած բանտարկեալի մը վրայ որ Սուրբ Հոգւոյն հրաւերին ուշադրութիւն տուած չէր: Մտիկ ըրած չէր Անոր «Որդեակ իմ, քու սիրտդ ինձի տուր» աղերսը ու փորձութեանց հետեւելով վերջապէս մարդասպան մը եղած էր: Պատմութիւնը ճշմարիտ էր ու անոր մանրամասնութիւնները խոր տպաւորութիւն ձգեցին Հըտսընի վրայ: «Որդեակ իմ, քու սիրտդ ինձի տուր» աղերսէն չկրցաւ երբեք հեռանալ: Անոր խիղճը շարունակ կը կրկնէր՝ «Որդեակ իմ, քու սիրտդ ինձի տուր»: Սակայն այս միջադէպէն քանի մը տարի վերջն էր որ ունեցաւ իր վերստին ծննդեան փորձառութիւնը:

Վերջապէս դպրոցի մէջ փոփոխութիւններ եղան որ զոհացուցիչ չէին, ու քանի որ Հըտսընի հայրը իր ղեկարարին մէջ օգնականի մը պէտք ունէր, Հըտսըն՝ 1845ի Ծննդեան տօնէն անմիջապէս առաջ թողուց իր դպրոցը: Ուրախ էր որ իր ապրուստին զէթ մէկ մասը կրնար շահիլ ու միեւնոյն ժամանակ տան մէջ իր ուսմունքին հետեւիլ: Այս նոր կարգադրութիւնը յաջող գնաց: Հօրը դրադարանին մէջ գտաւ պահանջուած բոլոր գիրքերը ու ընտանեկան օգտակար յարաբերութեանց միջոցով անոր ներքին կեանքի տաքնապանքը սկսան փարատիլ: Իր սիրտը Աստուծոյ յանձնեց ու Անոր նուիրուած ըլլալուն գիտակցութեան տիրացաւ: Կարծես ամեն ինչ լաւ ընթացաւ ժամանակ մը: Սակայն տարբեր փորձ մը կ'սպասէր իրեն:

Երբ 15 տարեկան եղաւ՝ Պարնսլիի ամենէն լաւ դրամատուներէն մէկին մէջ գրագրի պաշտօնն ստացաւ: Հոս լաւ մը վարժուեցաւ հաշուականութեան և նամակագրութեան: Սորվեցաւ նաեւ թէ դրամական խնդիրներու մէջ բացարձակ ճշդապահութիւն և ճշգրտութիւն անհրաժեշտ էին: Մեծ ու բազմազարդ աշխարհիս մէջ գտաւ իր փոքրիկ անկիւնը ու իրրեւ մարդ զիրք գրաւեց մարդկութեան մէջ: Սակայն աւանդ որ իրմէ տարեց գրագիր մը՝ որ զեղեցկադէմ էր ու շատերու բարեկամը, սկսաւ իր հին գաղափար-

ներուն վրայ խնդալ ու քանի որ ինք Բրիստոսի վրայ հաստատապէս հիմնուած էր, իր ընկերոջ անհաւատ տեսակէտէն տարուեցաւ ու սկսաւ իր առանձնական աղօթքը զանց ընել: Ասոր վրայ աւելցաւ աչքի ցաւ մը որ արդիւնքն էր ուշատեն օգային կազմի լոյսին տակ տոմարակալութեամբ զբաղելուն և ստիպուեցաւ դրամատան մէջ 9 ամիս պաշտօնավարելէն վերջ՝ գործէն հրաժարելով տուն վերադառնալ:

Աւելորդ է ըսել թէ անոր զուարթ խառնուածքը ամպոտեցաւ ու տան մէջ վայելած նախկին երջանկութիւնը աւրուեցաւ: Հայրը ամեն ջանք կը թափէր իրեն օգնելու, մայրը կրկնապատկեց իր զորովը ու աղօթքները որդւոյն համար, սակայն անոր 13 տարեկան քոյրը, Ամէլիա էր որ վերջապէս յաջողեցաւ իր վստահութիւնը շահիլ: Ամէլիա օրական երեք անգամ կ'առանձնանար իր եղբորը փրկութեան համար աղօթելու:

1849 Յունիսի մէջ Հըտսըն օրուան մը վազանձ ունեցաւ: Չէր գիտեր թէ ինչպէս պիտի անցնէր իր ժամանակը: Կէս օրէն վերջն էր՝ երբ անոր աչքերն յանկարծ ինկան թերթիկի մը վրայ որ իր մօտը կը գտնուէր: «Անշուշտ պատմութեամբ մը սկսուած ու քարոզով մը կամ բարոյական դասով մը վերջացուած գրութիւն մըն է. ես պատմութիւնը կ'առնեմ, քարոզն ալ քարոզ սիրողներուն կը թողու՛մ, մտածելով ձեռք առաւ թերթիկը: Վերնագիրն էր՝ «Բրիստոսի գլուխ հանած գործը»:

Անմիջապէս մտաբերեց Բրիստոսի խաչին վրայի՝ «Ամէն բան կատարուեցաւ» խօսքը ու մտածեց՝ «Բրիստոս մեղքի կատարեալ քառութիւն բերաւ, ամբողջ աշխարհի պարտքը վճարեց. եթէ ամբողջ գործը կատարած ու պարտքը բոլորովին վճարուած է, ալ ինծի ի՞նչ կը մնայ ընելու»: Այս խորհուրդը զինքը այն երջանիկ համոզման բերաւ թէ իրեն կը մնար ընդունիլ այս Փրկիչն ու Ասոր փրկութիւնը: Այսպէս Հըտսըն թէյլըր իր ամենէն օգտակար վազանձի օրն ունեցաւ:

Մայրը տունէն բացակայ էր ու երկու շաբաթէն պիտի վերադառնար: Ուստի Ամէլիան էր որ առաջին անգամ լսեց անոր դարձին ուրախ լուրը: Երբ Տիկին թէյլըր տուն վերադարձաւ, ամենէն առաջ Հըտսըն անոր դէմն ելլելով աւետեց՝ «Բարի լուր մը ունիմ քեզի համար»: «Գիտեմ, որդիս, երկու շաբաթէ ի վեր է արդէն որ քու տալիք աւետիսովդ կը ցնծայ սիրտս» պատասխանեց մայրը:

«Ի՞նչ կ'ըսես, Ամէլիան խստամեղա՞նց զրտնուեցաւ: Ինծի խոստացած էր ոչ մէկին բան մ'ըսելու» բացազանչեց Հըտսըն:

«Ո՛հ, որդիս, ոչ մէկը ինծի բան մ'ըսաւ այդ մասին» շարունակեց մայրը: «Սակայն երկու շաբաթ առաջ սրտիս վրայ այնպիսի ծանրութիւն մը զգացի քեզի համար որ որոշեցի առանց քու փրկութեանդ վստահութեանը տիրացած ըլլալու՝ չելլել իմ ծունկերուս վրայէն: Այնպէս յստակօրէն ստացայ այդ վստահութիւնը որ այդ օրէն ի վեր փառաբանութեամբ լեցուած է իմ սիրտս Աստուծոյ հանդէպ իր պատասխանին համար, ու անոր համար որ իմ մէկ հատիկ որդիս կրկին Աստուծոյ շնորհքը կը վայելէ»:

### ՃԱՄԲՈՒՆ ՓՈԽՈՒԻԼԸ

17 տարեկան Հըտսընի դարձը զայն կատարելապէս ազատեց իր տխուր տրամադրութենէն ու այն աշխարհային խնդիրներէն որ պրեթէ 6 տարի իրեն վրայ տիրած էին: Թէպէտեւ նոր փորձառութիւն մը՝ սակայն բոլորովին նոր միջավայր մը չէր այս անոր համար: Չէ՞ որ անոր թափառած տարիներուն ամբողջ ընթացքին իր վրայ ծածանած էին իր մանկութեան օրերուն ընդունած տպաւորութիւնները, աստուածամախ ընտանիքի մը յիշատակը և աղօթող ծնողաց ու քրոջ մը ազդեցութիւնը, բայց անիկա արդ վերստացած էր իր սրտի նախկին՝ խաղաղութիւնը ու տան երբեմնի երջանկութիւնը վերադարձած: Հըտսընի սիրտը այնքան մեծ ցնծութեամբ ու խոր երախտագիտութեամբ լեցուած էր որ չկրցաւ դիմադրել իր սէրն ու երախտագիտութիւնը յայտնելու կարող ըլլալու համար՝ Աստուծմէ գործի մասնաւոր ասպարէզ մը խնդրելու ներքին մղումին: Երկար տարիներ վերջը այս պարագան մտաբերելով կը գրէ, «Շատ լաւ կը յիշեմ թէ ինչպէս երբ անվերապահօրէն ինքզինքս Տէրոջը նուիրեցի, Ասոր սեղանին վրայ դնելով ինքզինքս, իմ կեանքս, բարեկամներս ու ամեն ինչս, խոր լըջութիւն մը հանգչեցաւ հոգւոյս վրայ ու այն վստահութեամբ համակուեցայ թէ իմ զոհն ընդունուած էր: Անբացատրելի կերպով Ասոր օրհնեալ ներկայութիւնը տեսայ: Չէի գիտեր թէ ինչ ծառայութեան համար ընտրուած էի, սակայն խորունկ գիտակցութիւն մը զիս զբաւեց թէ ես այլեւս իմինս չէի: Գիտակցութիւն մը՝ որ երբեք չթողուց զիս, մինչեւ այսօր տակաւին մէջս կ'զգամ: Այնպէս զգացի թէ Աստուծոյ ներկայութեան առջեւ

կեցած՝ Ամենակարողին հետ ուխտ մը կ'ընէի: Կարծես խոստումս ետ առնել կ'ուզէի, սակայն չէի կրնար: Կարծես ձայն մը ինծի կ'ըսէր, «Աղօթքդ լսուեցաւ, պայմաններդ ընդունուեցան»: Համոզուեցայ նաեւ թէ Չինաստան կանչուած էի. այս համոզումս ալ մինչեւ այսօր անցած չէ: Կարծես յստակ ձայն մը ինծի կ'ըսէր՝ «Ուրեմն ինծի համար Չինաստան գնա՛»:

Նոր ժամանակ մը սկսաւ երիտասարդ Հըտ-սընի կեանքին մէջ: Անցեալին մէջ, երբ տակաւին 4 տարեկան մանչուկ մըն էր, ըսած էր թէ երբ մեծնար, Չինաստան պիտի երթար: Ներկայիս իր կեանքին նշանակութիւնը Չինաստանի մէջ կը կայանար: Ապագային նայելով իր փորձառութեան փոքրիկ աշխարհէն անդին մեծ աշխարհ մը կը տեսնէր՝ որ սպասման մէջ էր. մարդիկ՝ որոնց համար Քրիստոս մեռած էր, կարծես ոչ մէկին հոգն էր: Բայց իր աղօթքը լսուած ու պայմանները ընդունուած էին:

(Շարունակելի)

Թարգմ. Ն. Մ.

Արծազանգ յետ մահու

### ԵՐԿՈՒ ԱԴԱՄՆԵՐ (\*)

Որպէս Ագամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս Քրիստոսի ամենեքին կենդանացին: Ա. Կոր. ԺԵ. 22

Նուաւ մարդն առաջին Ագամ ի շունչս կենդանի, երկրորդ Ագամ ի հոգի կենդանարար: Ա. Կոր. ԺԵ. 45-47

Գրութեանս վերնագիրը՝ «Երկու Ագամներ» կարգացողներէն շատերուն զարմանք պիտի պատճառէ, բայց ոչ թէ հաւատացեալներուն եւ Սուրբ Գիրքերով սնանողներուն, քանզի անոնք անմիջապէս պիտի հասկնան թէ՛ ի՞նչ ըսել կ'ուզեմ, հապա անապաշխար եւ Սուրբ Գիրքերէն անտեղեակ եւ միայն անունով Քրիստոսնայ կոչուողներ պիտի զարմանան, խորհելով թէ իրենք ի նախնեաց անտի, մէկ Ագամի մը մասին է որ ի լրոյ լսած են: Ներկայս առաւել այդպիսինե-

(\*) Սոյն յօդուածը կը հրատարակենք մեր ծերունազարդ եղբոր Գեորգ Զաքարեանի (Թօգաթցի) մահուան տարեդարձի առթիւ: Զայն ընդունած ենք իրմէ յարմար առթիւ մը հրատարակելու: Ինքը դեռ հրատարակութիւնը չտեսած, անցաւ Փրկչին ներկայութեան, բայց որովհետեւ խոստացած ենք իրեն ու նաեւ որովհետեւ գուտ անձնապէս ուսումնասիրութիւն մըն է, զոր նա ըրաւ ինքնատիպ քննելով իր Ս. Գիրքը, կը հրատարակենք առ ի օգտակարութիւն շատերու, ըստ եղբորը փափաքին:

ԽՄԲ.

րուն համար է որ ծառայութիւն մը մատուցած ըլլալու յոյս եւ փափաքով եւ աղօթքով կը գրեմ:

Երկու Ագամներուն ապրած կեանքին եւ հետեւանքներուն եւ արդիւնքներուն մասին բաղդատութիւն մ'ընելէ առաջ օրինակ մը տալ օգտակար կը սեպեմ, ստորեւ անոնց մասին գրելիքներս աւելի որոշ հասկցնելու համար:

Մօտաւորապէս յիսուն տարի առաջ Թօգաթի Սուլու փողոցը Ֆէսճի Օհան անուն ներկարար մը կար, սա բեռ մը փայտ ձախու կ'առնէ զիւղացիէ մը, մէկ կտոր աղտոտ ընկոյզի տախտակով միատեղ հարիւր փարայի, տախտակն ալ փայտանոց կը նետէ, ուր բաւական ատեն մնալէ վերջ՝ խորհուրդը կը յղանայ նոյն տախտակը խանութին նստարան մը շինել տալ, եւ զրացի ատաղձագործի մը տալով կը յանձնարարէ փայլուն աթոռ մը շինել. երբ վարպետը տախտակը հարթարելէ յետոյ փայլ տալ կ'սկսի՝ ահա՛ գիւղական տարազով հիանալի գեղեցիկ աղջիկ մը երեւան կ'ելլէ ի մեծ զարմացում վարպետին եւ տէրը եղող ներկարարին: Ժամանակ մը իբր զարդ գործածուելէն վերջ՝ քաղաքին կառավարիչը կ'իմանայ եւ 15 լիւրա օրմ. դրամ տալով կը գնէ: Վերջելը լսեցինք թէ՛ նա ալ 1000 լիւրայի ծախեր է եւրոպացի հնագէտներու:

Գանք մեր նիւթին, «Յաւիտենական դարեր առաջ» Բ. Տիմ. Ա. 9, Հոով. ԺԶ 25, նախ քան տիեզերքի եւ մարդկութեան ստեղծումը, Եփ. Ա. 4, սուրբ եւ օրհնեալ Ժամանակի մը մէջ «Ամենասուրբ» Երրորդութեան միջեւ խորհուրդ մը տեղի ունեցաւ, Կող. Ա. 26, որուն մէջ որոշուեցաւ աշխարհն ու մարդկութիւնը եւս ստեղծել: Սոյն ստեղծագործութեան մէջ՝ Երրորդութիւնը իր դիրքը եւ պաշտօնը որոշեց: Աստուածութեան Ա. անձնաւորութիւնը տիեզերքի եւ մարդկութեան ստեղծագործութիւնը ստանձնեց իր քով ունենալով որպէս ճարտարապետ Բ. անձնաւորութիւնը, Առաւ. Ը 22—30: Յետոյ ապագայ ստեղծուելիք մարդուն հաւանական անկումի եւ մեղանշակաւութեան պարագային Աստուածութեան Բ. անձնաւորութիւնը ստանձնեց, խօսք տալով նոյն իսկ աշխարհ գալով իր անձին գնովը մարդկային սեռը իր մեղքէն ազատելու ամենաձանր գործը՝ որով «Բամ», խօսք անունը վրան առաւ, Յով. Ա. 4:

Եւ Գ. «Սրբել, սուրբ պահելու եւ զօրացնելու եւ ամէն բան ի յաւ ածելու», Յով. ԺԳ 26 գործն ալ Աստուածութեան երրորդ անձնաւորութիւնը ստանձնեց, որ Սուրբ Հոգի կը կոչուի: Աշխարհ զանիկա չճանչնար... որ դեռ աշխարհը չստեղ-

ծուած «Զուրկերուն վրայ կը շրջէր կամ կը շար ժէր», Ծննդ. Ա. 2:

Արդ՝ ասկից շատ տարիներ առաջ, Մարտ ամսոյ վերջերը, զարնան մօտ ատեն, Ուրբաթ օր մը, գիշերուան խիստ մութ պահուն, Եփրատ գետի շուրջ գետինները ամենուրէք «փուշ եւ դատասկով» Ծննդ. Գ. 18, լեցուն անտառի մը մէջէն լեռ ձոր արձագանգող սրտակեղէք եւ աղի- ողորմ ձայն մը կը լսուէր. «Վա՛յ, վա՛յ, վա՛յ, այս ի՞նչ բան էր որ ըրի, ի՞նչ եղկելի մարդ եմ ես, ո՛վ պիտի ազատէ զիս այս մահացու մար- մինէն», Հոռվ. Է. 24: Լսելով այսպէս խաւարին մէջ կը խարխափէր արցունքը աչքերէն հեղեղի պէս վազցնելով յաղթանդամ մարդ մը, Ծննդ. Գ. 23—24: Վերջապէս ուշէն ուշ կը լուսնար, այսպէս անտառին մէջ ասդ անդ կը դեղերէր, պահ մը դադրեցնելով իր աղաղակը եւ շուրջի ամենի ծառերը զիտելով հաստակոճող ընկուզենի մը կը տեսնէր, չմոռնալով սակայն մերթ ընդ մերթ իր հագած լաթին, նաեւ փուշերուն վրայ բոկոտն կոխել եւ քալելուն պատճառաւ ոտքե- րուն արիւնլուայ ըլլալուն եւ ցաւելուն համար հառաչ մը քաշել:

Այս մարդուն հագածը դեռ նոր մորթուած արիւնոտ «կաշիէ հագուստ մըն էր», Ծննդ. Գ. 21, որմէ ձեռքերը եւս արիւնոտած էր: Դուրսը նոյն կաշիէն կտրուած երիզ մը ապարոշի պէս փաթ- թուած էր, որուն վրայ սեւ տառերով գրուած՝ Անինազանդուկիւն, Ծննդ. Գ. 17: Երիզէն կաթած արեան բիծեր ճակատին ու երեսին վրայ կ'երե-ւէին: Կուրծքին վրայ՝ դարձեալ սեւ տառերով սա երեք բառերը գրուած էին: Աջ կողմը՝ «տասն եւ եօթը» Գաղ. Ե. 19—22: Զախ կողմը՝ «Մեղք» Հոռվ. Ե. 12: Եւ մէջտեղը «Մահ» Հոռվ. Ե. 12:

Սա՝ ժամանակ ժամանակ՝ ո՛հ, ձեռքովս ըրի, ի՞նչ ընեմ, կը բացազանչէր եւ ձեռքերուն կը նայէր որ ձեռքերն ալ արիւնոտ են հագած լա- թէն պլշկելով, որոնց ազդեցութեան տակ ընկ- ճուած՝ այլանդակ, խոժոռաղէմ եւ յաւահատ երեւոյթ մը ունէր:

Ասիկա վերոյիշեալ երկու Աղամներէն ամե- նուս գիտցած Առաջին Աղամն է, որ՝ Աստուծոյ իր անհնազանդութեանը պատճառաւ զբախտէն վռնտուելէն անմիջապէս վերջ՝ հոգեկան դառն կացութեան մէջ իր ստացած սրտամտիկ տեսա- րանին ենթարկուեցաւ եւ այսպէս ընկուզենիին կոճղին առջեւ եղած պահուն՝ իր պատկերը նոյնութեամբ կոճղին մէջ ընդօրինակուեցաւ եւ հաստատուեցաւ: Քանզի կայ ժամանակ մը

զարնան մօտ, որ ընկուզենիին առջեւէն ինչ որ անցնի՝ կոճղը իսկութեամբ իր մէջ կ'ընդունի, ճիշդ լուսանկարչի մը օպթէքթիվին եւ շամպըը նուարին առջեւ կեցող առարկայի մը պատկերը փաթ սէշին վրայ աներեւոյթ կերպով ընդուն- ուածին պէս, եւ ինչպէս տէվըլօփի եւ վերած-ֆիք- սաժի գործողութիւնը կատարուելով պատկերը երեւան կուգայ՝ այնպէս ալ ուս կոչուող ընկու- զենիին կոճղը շերտերու վերածուելով եւ փայլ տրուելով իր ընդունած պատկերը երեւան կը բերէ իր որոշ ատենին առջեւէն անցած առար- կային, մարդուն, զազանին կամ թռչունին:

Ա. Աղամին ալ պատկերը կամ ինքնութիւնը, այդպէս սեպուած է ըստ Ս. Գրոց: Հոռվ. Ե. 12: Ինչպէս ընկուզենիին կոճղը բազմաթիւ շերտե- րու վերածուելով՝ մէն մի շերտը կոճղին մէկ անգամէն ընդունած պատկերը ցոյց կուտայ՝ այն- պէս ալ Աղամին Աստուծոյ պատուէրին մէկ անգամ անհնազանդ ըլլալը ցոյց կուտայ թէ՛ «Աղամէն սկսեալ ամեն մարդ մեղանշական է»: Հոռվ. Ե. 15: Զկայ մէկը որ վերոյիշեալ տասն եւ եօթը տեսակ մեղքերէն ու եւ մէկէն զերծ ըլլայ»: Գաղ. Ե. 22—24: «Նոյնիսկ մէկ հոգի ալ չկայ» Սաղ. ԺԴ 3 բացի Բրիստոսէ, քանզի «մէկը չկրցաւ անիկա մեղքի համար յանդի- մանել»: Յով. Ը. 46: Որովհետեւ «Ինքը մեղք մը չգործեց ու իր բերնին մէջ նենգութիւն մը չգտնուեցաւ»: Ա. Պետ. Բ. 22: Ես. ԾԳ. 9: Եբր. Դ. 15:

Ահա՛, Ա. Աղամին եւ անոր թոռներուն խղճա- լի վիճակը: Անիկա մարդկութեան քլիշէն—կա- ղապարն է. ամեն մարդ անոր մեղանշական բնութենէն ընդօրինակուած է, եւ հետեւաբար «անոր յանցանքովը բոլոր մարդոց դատապար- տութեան վճիռ եղաւ»: Հոռվ. Ե. 18: Մէկ խօսքով «Մեղքը անկէ ամեն մարդոց վրայ տարածուե- ցաւ եւ ան մեղքէն ալ մահը»: Հոռվ. Ե. 12: Այն- պէս որ եթէ նա Աստուածային պատուէրին անհնազանդ գտնուելով չմեղանչէր՝ մեռնիլ չպիտի ըլլար, բայց հիմա «ամեն մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ: Եբր. Թ. 27:

(Շարունակելի)

Գ. ԶԱՔԱՐԵԱՆ (Թողատցի)

Հիւանդանոց

Մարտէյլ, 7 Սեպտ. 1935

## ԵՐԿՆԻՅ ՄԷՋ ԶԲԱՂՈՒՄ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆՔ

«Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ», կ'ըսէ Տէրն մեր: Մեզի համար ալ բնական է ըսել, մեր երկնաւոր Հայրը մինչեւ հիմա կը գործէ, մենք ալ կը գործենք ու պիտի գործենք, թէ՛ հոս և թէ՛ երկնից մէջ: Գործունէութիւն է Աստուածային բնութիւնը, գործունէութիւն պէտք է ժառանգած ըլլան իր որդիներն: Թէ Աստուած գործօն էութիւն մ'է, տիեզերք վկայ է իւր հրաշալի կերտուածով և անոր մէջ երեւցած անընդհատ գործունէութիւնը, որով կը պահպանուի ամէն բան և կը զարգանայ ամէն կեանք: Արարածոյն համար գործունէութիւն կը նշանակէ զբաղում արդիւնաւոր:

Արարիչը օժտած է անբան կենաց իւրաքանչիւրը բնագոյններով, որոնք կարելոր են պահպանելու և անոր անհրաժեշտ պէտքերը հայթայթելու, վայելքներ եւ շնորհած է, զորս կարող են վայելել կրաւորապէս, բայց իրենք կարող չեն իւրովի վայելք մը ստեղծել: Մինչդեռ բանական կեանքը կոչում ունի լուրջ աշխատութեամբ վայելքներ հայթայթելու, որոնք անոր պիտոյից չափ բազմազան և բազմաթիւ են: Մարդու շնորհուած այս զբաղմանց արդիւնաւորմամբ ի յայտ կուգայ իւր նմանութիւնը հաստիչ էութեան, որմէ ծագում առած է ամէն բան և որոյ աշխուժով շարժման մէջ կը պահուի ամէն բան:

Հրեշտակներուն համար ըսուած է. «Անոնք սպասաւորող հոգիներ են»: Եւ իրենց զբաղմանց բազում օրինակներ ունինք նուիրական մատենից մէջ:

Ճշմարիտ է որ երկնից մէջ սրբոց ունեցած զբաղմանց նկատմամբ Սուրբ Դրոց մէջ բան չէ ըսուած: Եւ Յայտնութեան գրքին մէջ ալ անոնց երկրպագութեան և երախտագէտ զգացմանց արտայայտութեան նկարագրութիւնը միայն տրուած է: Եւ սակայն ասկէ պէտք չէ հետեւցնել թէ անոնց զբաղումը լոկ աղօթել և օրհներգութիւն կարդալ է և թէ անկէ դուրս զօսաշարժիկներու պէս անաշխատ վայելքներով կը զբաղին: Պէտք չէ կարծել թէ երկինք աղօթատեղի մըն է միայն և կամ զօսաւայր մը, զուրկ լուրջ զբաղմանց և աշխատութեան օրհնութիւններէն: Եթէ սուրբերը երկնից մէջ ալ Աստուծոյ բնութեանկից և նորա ստորոգելիաց հաղորդ պիտի գտնուին, պէտք է կարող և կամեցող ըլլան

զբաղել ստեղծիչ արարքներով, արդիւնաւորելու իրենց անձին և այլոց բարօրութիւնը: Ի պատարաստի վայելք ընդ երկար չեն գոհացներ մեզ: Արարիչը իւր օրինակով օրհնած է աշխատութիւնը: Առողջ կեանքը կը վայելէ զայն և իւր աշխատութեան պատուէն հաճոյք կը զգայ: Հոս է որ բանական կենաց վեհութիւնը կ'երեւնայ, և անոր Աստուածաման բնութիւնը ի յայտ կուգայ: Ո՞չ ապաքէն մեր փոքր աշխարհը իր բանական էական ձեռաց մէջ տիեզերական աշխարհին մէկ մանրանկարը եղած է:

Արարիչը մեր վաղանցիկ կենաց զբաղման համար անթիւ և անհամար առարկաներ ւ մըրած է մեր մօտ: Բնական օրինաց զօրութիւններ տուած է որ նիւթոց հետ ներդաշնակութեամբ կը նպաստեն մեր ձեռաց գործերուն արդիւնաւորման: Ասոնց ամէնը ոչ միայն նիւթական վայելքներուն կը տիրացնեն մեզ, այլ և կը նպաստեն իրենց մատուցած զբաղմունքներով զարգացնել մեր հոգւոյն կարողութիւնները եւ նոյն համեմատութեամբ մեր վայելքները բազմապատկել անսահման առաւելութիւններով:

Արդ, քանի որ երկու աշխարհներու Արարիչը և Վարիչը նոյն է, բնական է գուշակել մատակարարութեան նմանութիւն: Տեսանելի և անտեսանելի աշխարհաց մէջ կարծուածին չափ օտարութիւն պէտք չէ երեւակայել: Մեր հոգւոյն գործունէութեան միջնորդող գործարանաց թօթափումը շնշանակեր մեր հոգւոյն էութեան ջնջումը: Տեսանելի նիւթը կարելի է անտեսանելի վիճակի փոխել, բայց ատով նիւթը չը զաղրիք նիւթ մնալէ իւր անայլայլ յատկութիւններով: Նոյնը կարելի է ըսել մեր էութեան նսին համար:

Եթէ մենք ինքնութիւննիս մերկանալով ուրիշ էութեան պիտի փոխուինք և մեր նոյնութիւնը պիտի կորսնցնենք, մեր երկրաւոր կեանքը ի՞նչ նշանակութիւն ունի: Մեր երկրային կեանքը որչափ ալ բարձրանայ և ազնուանայ, մեր հոգին կարողութիւն և պատշաճութիւն ունի իւր նոյնութիւնը և մաքուր առանձնայատուկ միտումները և ստորոգելիքները պահելու, որոնք մեր Եսը կը կազմեն և որ մեր Աստուածատուր ժառանգութիւնն է: Մեր զբաղմանց առարկաները կրնան փոխուիլ միջավայրին պատշաճութեամբ, որոնք մեր կարողութեան ընդարձակումը կարելոր կ'ընեն, բայց ոչ անոնց այլակերպումը անճանաչ ըլլալու աստիճան:


Տէրն մեր կ'ըսէ, «Ինչ որ Հայրը կ'ընէ...

նմանապէս Որդին ալ կ'ընէ»։ Արդարեւ այս իր ընդարձակ իմաստով Տէր Յիսուսի միայն կը պատշաճի, բայց իւր սահմանաւոր իմաստով մարդու համար ալ է։ Արարիչը բնութեան մէջ շրջապատած է մեզ առարկաներով, երեւոյթներով և գործունէութիւններով աշխարհի կարգով և շարքով, որ մեր մտաց գործելու եղանակին պատշաճելով, մեզ դիւրին է դասակարգել և ըմբռնելի և օրինակելի ընել, բանաւոր հետեւութիւններ հանելով զանոնք արդիւնաւորել։ Այս անտարակոյս հրաւէր է մեզ Արարչին կողմանէ հետեւիլ իր գործունէութեան օրինակին, և արդարեւ հետեւելով կ'օրհնուինք և կը հրահանգուինք հոգևով և մտքով և մեր վայելքները կը բազմապատկուին, մինչ միւս կողմանէ մեր պէտքերը խթան կ'ըլլան մեզ ի գործ վարելու։

Անտարակոյս երբ արժանանանք երկնից մէջ մուտք գտնել, մեր Արարչին անձին և զինք շրջապատող իրաց վիճակին փառքը պիտի գրաւէ մեր բովանդակ անձին ուշադրութիւնը և սէրը, ինչպէս նաև մեր կարողութեանց և գործունէութեան աշխոյժը Իրեն պիտի ուղղուին, և ինք պիտի ըլլայ մեզի համար անսպառ սիրոյ և վայելմանց աղբիւր և հրահանգ։ Բայց պէտք է կարծել որ այս փառաց վայելքը մեզ կ'արդիւնէ զբաղելէ արարքներով, որ կարող են մեր և մեր ընկերներուն բարօրութեան առաւելութիւնը արդիւնաւորել։ Տարակոյս չկայ, Արարչին հաճութեան օրհնութիւնը մեզ զբաղեցնող գործոց վրայ պիտի հանգչի և նա ինքն ստեղծուածոց մէջ պիտի փառաւորուի մեր զբաղմանց արդիւնաւորութեամբ։ Տէրն մեր իւր նշանաւոր աղօթից մէջ կ'ըսէ առ Աստուած. փառաւորէ քու Որդիդ, որ քու Որդիդ ալ քեզ փառաւորէ։ Տարակոյս չկայ որ Ամենակալն իւր բանաւոր էակաց Աստուածանման արարքներով կը փառաւորուի, արարք՝ որ լուրջ զբաղմանց բնութիւնը ունենայ։ Մենք չենք կարող ճշդել այդ զբաղման բնութիւնը և որպիսութիւնը։ Բայց այդ չէ կարելորդ խնդրոյն մէջ։

Յ. Մ. — (Կ. Պոլիս)

Հայ Աւետ. եկեղեցւոյ նախաճաշերէն մին



... 15 Յունուար 1939

### Սիրելի Փ.

Առաջին նամակդ, որով կը ծանուցանէիր քու ապաշխարութիւնդ, զիս սրտովին ուրախացուց։ Ինծի համար զարմանք չազդեց այն, քանզի գիտէի թէ կը փնտռէիր և ուրախ եմ որ փնտռածդ, Փրկիչը — խաղաղութիւն տուող Փրկիչը գտար։ Քու նամակիդ մէջ արտայայտած ուրախութիւնդ շատ բնական կը գտնեմ, քանզի գիտեմ անձնական փորձառութեամբ և ուրիշներու ալ փորձառութիւնով թէ, փրկութեան վստահութեան ուրախութիւնը անպատմելի է։ Տէրը քեզ այդ ուրախութեան մէջ պահէ։

Ինչ աղուոր, որ դեռ անոր պատասխանը չգրած, քու երկրորդ նամակդ կ'ընդունիմ։ Այս անգամ ուսկայն այդ ուրախութիւնը, խաղաղութիւնը վրդովող ալիքներու մասին կը խօսիս։ Ասոր վրայ ալ չեմ զարմանար, ընդհակառակն կ'ակնկալէի որ այդպէս ըլլար։ Քանզի Աստուծոյ բոլոր զաւակները ընդհանրապէս նոյն ճամբայէն անցած են և յետ ապաշխարութեան ընդհանրապէս ծաղրուած են։ Դուք բացառութիւն մը բնաւ չպիտի կազմեն Աստուծոյ թագաւորութեան մէջ։ Կարդա Դործոց Բ. 13։

Կը գրես թէ քեզ ծաղրողը հայրդ է։ Այս ալ բոլորովին անբնական բան մը չէ, և դուն քու տեսակիդ մէջ միակը չես կազմեր, ընդհակառակն անձեր եղած են, որոնք իրենց ապաշխարութենէն յետոյ ոչ միայն ծաղրուած են տան անդամներու կողմէ, հապա տունէն դուրս ձգուելու սպառնալիքին տակ գտնուած են, նոյնիսկ հեթանոսութենէ դարձած պատանիներ իրենց ծնողներէն թունաւորուած և մեռած են։

Սակայն քու պարագադ սիրելի Փ. այդպէս չէ։ Ես կը ճանչնամ հայրդ, անիկա հոգեւոր մը չըլլալով հանդերձ հոգեւորները կը գնահատէ և կը յարգէ։ Միայն թէ իր գաղափարը պատանեաց ապաշխարութեան մասին տարբեր է։ Ան կը խորհի թէ պէտք է մարդ առնուազն 20—25 տարեկան ըլլայ ապաշխարելու համար. բնաւ չմտածեր Փրկչին այն խօսքի մասին, զոր կ'ըսէ.

Ոչ մի խօսք՝ միայն մէկ բառ մը բարկութեան, Բայց ահա ան գգայուն սիրտ մը կը վերաւորէ։

Ոչ մի խօսք՝ միայն մէկ բառ մը չոր՝  
արհամարհական,

Բայց ահա ան՝ արցունքներ կը հոսեցնէ։

«Թող տուէ՛ք այդ մանր տղոցը որ Ինծի գան և մի արգիլէ՛ք ատոնք Ինծի գալէ, վասնզի երկիրնքի թագաւորութիւնը այդպիսիներուն է»:

Հակառակ ասոր որ քու հայրդ այդ մասին գաղափար և հասկացողութիւն չունի, այսու-ամենայնիւ անիկա Հօր Աստուծոյ և Տէր Յիսուս Քրիստոսի նախասահմանութիւնով քու հայրդ է, և Աստուծոյ ներկայացուցիչը քեզ համար այս աշխարհի վրայ: Եթէ կայ մէկը այս աշխարհի վրայ, որուն ամենէն առաջ հնազանդելու ես, հայրդ է, ուրիշ բառով ծնողքդ: Ուրեմն մտքիդ կամ սրտիդ մէջ դառնութեան կամ արհամարհանքի նշոյլ մ'իսկ չգտնուի այն խորհրդով թէ, հայրդ չպիտեր:

Եթէ ճիշդը կ'ուզես գիտնալ, հայրդ հոգեւոր կեանքի և քրիստոնէական հաւատքի մասին այնքան բարձր գաղափար ունի որ, ինք չհամարձակիր մօտենալ անոր ինքզինքը շատ մեղաւոր սեպելով. նոյնպէս կը խորհի թէ քեզի պէս պատանիի մը համար անկարելիութիւն մը, հետեւաբար ծիծաղելի բան մըն է սկսիլ քրիստոնէական հաւատոյ կեանքը, քանի որ իր գաղափարովը չպիտի կրնաս շարունակել:

Ուրեմն կը տեսնե՞ս թէ խնդիրը տարբեր գոյն մը ունի: Հայրդ չծաղրեր քեզ, որ քրիստոնէայ մը եղար, հապա կը խնդայ քու ներկայ տաք վերաբերմունքդ, աղօթքներդ, կեանքիդ փոփոխութիւնը տեսնելով և կը խորհի թէ քանի մը օր, շաբաթ մը, ամիս մը վերջը առաջուան փ.ը պիտի ըլլաս, ուրեմն լաւ կ'ըլլայ բնաւ սուրբ բաներու ձեռք չգալցնել: Այս տրամաբանութեան մէջ իրաւունք ունի, այնպէս չէ՞, դուն ալ իրեն իրաւունք չե՞ս տար:

Բայց նայէ՛ փ., դուն ի՞նչալէ վախնալու չես: Զէ՛ թէ որովհետեւ անկարելի է որ ի՞նչաս, հապա որովհետեւ Յիսուս ըսած է. «Ան որ Ինծի կուգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ». Յովհ. Զ. 37: Ան քեզ պիտի պահէ: Ան քեզ պիտի շրջապատէ, որպէսզի բան մը չպատահի քեզի և դուն քալես ուրախութեան կեանքին մէջ:

Ու երբ հայրդ տեսնէ զքեզ որ այս կեանքին մէջ ուրախութեամբ կը շարունակես, ինքը յարգանք մը պիտի ունենայ քու հաւատքիդ հանդէպ և այլեւս մէկզի պիտի դնէ ծաղրանքը և ուրախութեամբ և ներքին գոհունակութեամբ քեզի համար պիտի վկայէ ըսելով թէ քու կեանքդ ցոյց կուտայ իսկական հաւատացեալ մը ըլլալդ և թէ դուն հաւատացեալ մըն ես:

Ուրեմն մի՛ վրդովիր, այլ այդ ծաղրանքը քեզ

աւելի թող քաջալերէ, զքեզ խթանէ, Քրիստոսի աւելի մօտ գալու և Անոր շնորհքովը հոգեւոր կեանքն ապրելով Քրիստոսը փառաւորելու: Ո՛վ գիտէ թերեւս հայրդ տեսնէ քու հաւատոյ կեանքդ և հետեւի քեզի, և դուն հօրդ դարձին պատճառ ըլլաս: Ասոր համար կ'աղօթէ քու բարեկամդ:

Այս անգամ այսքան, գալ անգամ կ'ուզեմ քեզի նամակիդ մէջէն ուրիշ հարցի մը մասին գրել:

Քեզի համար աղօթող հոգ. հայրդ

\*\*\*



ՄԱՆԿԱՆՑ

ՄԱՏՆԻՉԸ

Երբեք չեմ տեսած որ տղաքները մատնիչ մէկը սիրեն: Շատախօսութիւնը ստորին բան է: Սակայն ձեզի մատնիչի մը պատմութիւնը պիտի ընեմ որ վստահ եմ թէ պիտի հետաքրքրէ ձեզ: Եւ այս մատնիչը չպիտի մեղադրէք, վասնզի ան իր գործին ուշադրութիւն կ'ընէ, ինչ որ շատախօս մը ոտվորաբար չըներ: Ասկէ զատ այս մատնիչը շատ օգտակար է. և կրնաք ասոր վրայ զարմանալ, վասնզի շատախօսները անօգուտ ըլլալէ զատ փրասակար ալ են:

Այս մատնիչը զպրոց չերթար տղաքներուն վրայով մատնիչութիւն ընելու: Ան ոչ մանչ է, ոչ աղջիկ, ոչ մարդ է ոչ ալ կին: Ըսածս հանելուկ մը պիտի կարծէք: Սակայն վայրկեանէ մը զաղտնիքին պիտի տեղեկանաք:

Ընդարձակ քաղաքի մը մէջ զանազան մեծ շէնք մը տանիմ ձեզ, շէնք մը ուր գրամի մեծ գումարներ պահուած են: Շատ սենեակներ կան հոն քանի մը յարկերու վրայ: Եւ գողութեան վտանգին համար պահապան մը կը սպասէ բոլոր գիշերը ամբողջ շէնքին մէջ ասդին անդին կը պտտի, և կը հսկէ:

Հոս այս շէնքին մէջ է մեր մատնիչը: Բոլոր ժամանակը հոս կը կենայ, սակայն անոր գործը

միայն գիշերներն է: Կրնա՞ք գուշակել թէ ի՞նչ է անոր գործը:

Ենթադրենք թէ պահապանին քունը տանի, կամ ծոյլ կամ անհոգ գտնուելով գիշերապահութիւնը զանց ընէ: Գողերը կրնան պահապանին չհսկած միջոցին ներս մտնել, և դրամը տանի: Ուստի շատ կարեւոր է որ անիկա հաւատարիմ ըլլայ, և բոլոր գիշերը երբեք չթերանայ ամէն մէկ սենեակ պտըտելու և տեսնելու թէ ամէն բան կարգի՞ն է: Սակայն մէկը չկայ որ տեսնէ թէ պահապանը հաւատարիմ է թէ ոչ. վասն զի գիշերը շէնքին մէջ պահապանէն զատ մէկը չգտնուիր: Ուրեմն, դրամին տէրերը ի՞նչպէս պիտի գիտնան թէ պահապանը ամէն ժամ շէնքին մէջ կը հսկէ թէ ոչ: Ահա մատնիչին կարեւորութիւնը կը տեսնէք: Անիկա հոն է պահապանին վրայ հսկելու, ըսելու համար թէ անիկա հաւատարիմ է թէ ոչ:

Այս մատնիչ ըսածնիս ելեկարական պզտիկ մեքենայ մըն է: Ժամացոյցի նման երես մը ունի, և երեսին վրայ պզտիկ ծակ մը կայ, որուն ետեւ ժամը անգամ մը թուղթի կտոր մը կ'երեւայ, վայրկեան մը կը մնայ և յետոյ մեքենային միջոցաւ կ'աներեւութանայ: Եթէ պահապանը ճիշդ ժամանակին հոն գտնուի, անունը կը գրէ թուղթին վրայ: Սակայն եթէ հոն չէ, թուղթը կը սահի կ'երթայ և ինք չկրնար զայն ետ քաշել:

Այս թուղթերը մեքենային երեսին ետեւ պզտիկ ճախարակի մը վրայ փաթթուած են, և առաւօտուն, երբ մեքենան կը բացուի, պարապ թուղթը կը մատնէ թէ այս ինչ ժամուն պահապանը իր պարտականութիւնը չէր կատարեր: Պահապանը միայն այդ մէկ վայրկեանը ունէր և ոչ թէ մանրերկրորդ մը աւելի. եթէ հոն պատրաստ գտնուէր, իր անունը գրելու չափ ժամանակ կար, սակայն կորսնցնելու ժամանակ չունէր: Բայց պատրաստ չէր: Մատնիչ թուղթը տեղէն շարժեցաւ և պահապանը առիթը կորսնցուց: Հարկ չկայ որ ձեզի ըսեմ թէ իր պաշտօնը կը կորսնցնէ երբ հասկցուի թէ հաւատարիմ չէ:

Պիտի ուզէի՞ք որ մէկը շարունակ ձեզ դիտէր, արձանագրութիւն մը պահէր զոր չկրնայիք փոխել և զիտնայիք թէ այդ արձանագրութիւնը ցորեկուան լուսով պիտի քննուի: Մէկը որ սխալմունք չընէր, և միայն ճշմարտութիւնը կ'ըսէ և զոր չէք կրնար կաշառել: Ձեզի ըսեմ, տղաքներ, թէ ճիշդ այսպիսի մէկը ձեզի նկատմամբ արձանագրութիւն կը պահէ բոլոր ժամա-

նակը: Դուք չէք տեսներ զայն, և անոր անիւն-րուն դառնալուն ձայնը չէք լսեր, սակայն շարունակ ձեզի հետ է և շարունակ արձանագրութիւնը կը պահէ: Թերեւս պիտի հասկնաք թէ ի՞նչ ըսել կ'ուզեմ եթէ ճերմակ թուղթին անունը տամ ձեզի: Մեծերը պատեհութիւն կ'ըսեն ասոր: Պատեհութիւնը այն ժամանակն է երբ պէտք է որ բան մը ընէք. և ճերմակ թուղթը պատեհութիւնն է: Ան ձեր առջեւ կու գայ ճիշտ ժամանակին և դուք ձեր առիթը կ'ունենաք: Եթէ ուղիղ բանը ճիշդ ժամանակին ընէք, արձանագրութիւնը պիտի ցուցնէ թէ հաւատարիմ էիք: Սակայն ճերմակ թուղթը չսպասեր: Եթէ ուշ մնաք կամ ծոյլ կամ անհոգ գտնուիք, թուղթը տեղէն կը շարժի կ'երթայ և երբեք չվերադառնար: Եթէ թողուք որ վայրկեանը անցնի երթայ առանց ընելու ինչ որ պարտէիք ընել, ճերմակ թուղթը պիտի սահի երթայ ձեր զանցառութիւնը արձանագրելով:

Շարունակ լռիկ անիւնները կը դառնան: Աղէկ բան մը ընելու համար տանը մէջ և դպրոցին մէջ առիթ ունիք. եթէ առիթն օգտուիլ ուզէք բաւական է ան, դաստիարակութիւն ստանալու, աղէկ նկարագիր կազմելու, բարի բաներ ընելու, շատ օգտակար ըլլալու պատեհութիւնը ձեր ձեռքն է: Սակայն նոյն առիթը երբեք երկու անգամ չներկայանար: Անիւնները շարունակ կը դառնան, ճերմակ թուղթը պիտի սահի երթայ: Կը փափաքիմ որ տղաքներս այնպիսի արձանագրութիւն մը ձգեն զոր տեսնելով ուրախանան երբ Աստուած զայն ի յայտ բերէ մեծ օրուան լոյսին մէջ:

Քաղուած՝

«Գոհարներ մանուկներու համար» գիրքէն



## ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ





ՍԱՄՈՒԷԼ ԵՂԲ. ՊԱԳԳԱՆԵԱՆ ՄԵՐ ՄԻՍԻՈՆԱՐԸ.— Կրկին բացատրութիւն մը տալու հաճելի ստիպողականութեան տակ կը գտնուինք մեր սիրելի եղբօր մասին:

Երբոր Սամուէլ եղբայր Պաղգալեան ներքնապէս համոզուած ըլլալով որոշում տուաւ Սուրիա մեկնիլ քրդախօս հայերու և քրդերու մէջ աշխատելու, Մարսէյլի եկեղեցին չնկատելով իր անձնական շահը, չողբաց անոր պէս բանիբուն



# ԳԱՌՆ ՈՒԿԻՆ ԵՐԳԸ

Գերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.



1 Զորս անկիւնէն սփռուքին  
Խուճըք փրկելոց կ'անցնին:  
Այդ շարքերէն կը լսուի  
Երգ մը, ի՛նչ հիանալի:  
Թէեւ շաղուած՝ արցունքով  
Անլուր հառաչանքով,  
Սակայն փառքի եւ ցնծման  
Երգն է սուրբ՝ աննրման:

2 Այս երգն է «Երգն Գառնուկին» —  
«Նոր Երգն» փառանց անգին,  
Խաչն է սկիզբն տողերուն  
Ու դեռ երգուի հեռուն:  
Երգը փրկին վէրքերուն,  
Յաղթական մարդերուն:  
Զի ինք ճամբայ փրկութեան  
Եղաւ մեզ յաւիտեան:

3 Հոս խուճեր փրկեալներէն  
Ցնծամբ ահա կ'երգեն  
Յաւերժական երգն Գառնին,  
Իր սէրը կաթողին:  
Խուճեր հոն կ'արձագանդեն,  
Թէեւ անլուր վանկէն,  
Անոնք զիրար ճանչցած են  
Իրենց երգին շեշտէն:

4 Ա՛հ, ե՛րբ պիտի երգենք, Տէր,  
Այս երգն Քեզ առնութեւ,  
Ե՛րբ գաս Քու ժողովրդեան,  
Ո՛վ Աստղ առաւօտեան:  
Ա՛հ, շո՛ւտ ժողովէ փրկեալներդ,  
Պատրաստէ զաւակներդ,  
Երգելու երգն աննման  
Գառնուկին՝ յաւիտեան:



մեր բոլոր պաշտամունքները կատարել, թէ կիրակի օրեր և թէ շաբթուան միջոցին տեղի ունեցած աղօթածողովները:

Տարիներէ ի վեր ունէինք սեփական եկեղեցի մը ունենալու փափաքը, սակայն գործնական անցանք անցեալ Յունիսին միայն:

Համայնքիս 100ի մօտ ընտանիքներու ներկայացուցիչները, միաձայն և սիրալոյսով յայտնեցին իրենց հաւանութիւնը և տեղւոյս վրայ ընտրեցին Յանձնախումբի անդամները:

Եկեղեցւոյ շինութեան Յանձնախումբի առաջին գործը եղաւ դրամական խոստումներ ապահովել և առաջին նիստին 500 Ե. ոսկիի գումար մը գոյացաւ:

Մի միայն Հայ Աւետարանական համայնքէն մեր ապահոված դրամական խոստումները տարուան մը միջոցին բարձրացան 1200 Ե. ոսկիի, վճարելի հինգ տարուան միջոցին: Քաջալերական կողմը այն է թէ շատեր իրենց ոյժէն աւելի խոստացան և մաս առ մաս կը շարունակեն վճարել: Մեծամասնութիւնը գաղթական ընտանիքներէ կազմուած ըլլալով արդարեւ գոհացուցիչ երեսոյթ է տեսնել համեստ դասակարգին իսկ առատաձեռն մասնակցութիւնը, տիրանալու անձնական եկեղեցիի մը:

Քաջալերուած 1200 ոսկիի խոստումներէն և թէ բազմաթիւ ոչ Աւետարանական (Լուսաւորչական և թէ Կաթոլիկ հայրենակիցներու ալ նուիրատուութիւններէն), Յանձնաժողովը որոշեց ծախու առնել յարմար կալուած մը: Գտնուեցաւ վիլլա մը և անոր կից շէնք մը չորս յարկաբաժիննոց յարմարագոյն կեդրոն մը, թէ եկեղեցիի մը շինութեան և թէ ապագային եկեղեցիին մօտ դպրոց մըն ալ ունենալու, փոքրիկներու ազգային և քրիստոնեայ դաստիարակութիւն տալու:

Օգտակար կը նկատենք հետեւեալ յուսարանութիւնը տալ անոնց, որոնք կրնան առարկել, թէ ինչո՞ւ դրամը չի գոյացած, պարտքով ծախու առնուեցաւ կալուածը:

1. — Նախ կալուածը 1850 ոսկիի առաջարկուեցաւ մեզ վճարելի մաս առ մաս երեք տարուան միջոցին, սակայն երկար խորհրդակցութենէ և կալուածատիրոջ հետ բանակցութենէ վերջ առաջարկեցինք կանխիկ 1700 ոսկի, ինչ որ ընդունուեցաւ: Իրամատան մը հետ մասնաւոր կարգադրութեամբ յաջողեցանք նուազագոյն տոկոսով դրամը փոխ առնել:

2. — Խոստումներէն և պատահական նուիրատուութիւններէն գոյացած դրամը ուղեցինք օգտագործել:

3. — Ընտրուած կալուածը ամէն կերպով յարմար է թէ եկեղեցիի թէ դպրոցի: Նկատի առնուած է նաև թաղամասին մաքրութիւնը և հանդարտութիւնը:

Ծախու առնուած երկու շէնքերը ներկայիս, առժամաբար կը վարձուին տարեկան 140 Ե. ոսկիի: Այդ գումարէն պիտի վճարուի դրամատունէն կատարուած փոխարինութեան տոկոսը և այլ ծախսերը: Այս կերպով մայր գումարէն պիտի պակսի ամէն տարի 80 Ե. ոսկի: Եկեղեցւոյ շինութեան պիտի սկսուի այն ատեն միջոցները մնացեալ պարտքը, մօտաւորապէս 1350 Ե. ոսկին ամբողջութեամբ վճարուի ու կալուածը դառնայ Հայ Բողոքականաց սեփականութիւնը: Մինչեւ թուական մեզի յանձնուած նուէրներուն գումարն է 400 Ե. ոսկի, վարձքերէն եղած զանձումներէն զատ: Դպրոցի և թէ եկեղեցւոյ համար նախատեսուած շինութեան ծախքը մօտաւորապէս 4000 ոսկի է: այս գումարին 1200 ոսկին Աղեքսանդրիոյ Հայ Աւետարանական համայնքը ապահոված է, և զանձումները կանոնաւոր կ'ընթանան:

Ապաւինած ենք նախ Աստուծոյ և հայ ժողովուրդին առատաձեռնութեան, և Աստուծապաշտութեան, առանց դաւանական խորութեան վստահ ենք թէ մեր երկնաւոր Հայրը մեզ կ'առաջնորդէ, սրովհետեւ այս դժուարին գործին լծուեցանք աղօթքով և ձեռնունայն, ապաւինելով միայն Աստուծոյ և Իր դաւաճներուն սրտաբուրդի աջակցութեան: Ուրախ ենք թէ ունինք այդ հաւատքը, այն է, իրազործել սկսուած աշխատութիւնը և հասնիլ մեր նուիրական նպատակին: Ուրեմն հնազանդինք Աստուծոյն և տանք մեր նուէրները, ոչ թէ նուէր մը մարդոց ալ Աստուծոյ:

Անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ կրնան իրենց նուէրները դրկել հետեւեալ հասցէներուն՝

Rev. W. P. GILMOR

American Mission, Alexandria, Egypt.

Վեր. ՍԱՄՈՒԷԼ ՄԵԼՔՈՆԵԱՆ

American Mission, Alexandria, Egypt.

Տ. ԵՐՈՒԱՆԴ ԲԻԶԻԲԵԱՆ

7, Rue des Sœurs, Alexandria, Egypt.

Աղեքսանդրիա, 2 Դեկտ. 1938